

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մուրադյան Սվետլանա Արմենի

## ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2020

**Ատենախոսության թեման հաստատվել է Հյուսիսային համալսարանում:**

**Գիտական  
ղեկավար՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Գևորգի Ճուղոյան**

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Աշմատի Հակոբյան**  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Սուրեն Հակոբի Պարսյան**

**Առաջադար  
կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. հոկտեմբերի 29-ին

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Լ. Հ. Գրիգորյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Հարկաբյուջետային քաղաքականության կարգավորումը մշտապես գտնվում է պետության ուշադրության ներքո, հանդիսանալով մակրոտնտեսական հավասարակշռման կարևորագույն գործիք: Իրականացնելով ֆիսկալ գործառույթներ և կատարելով հարկային հավաքագրումներ, պետությունը դրանով փոխհատուցում է հանրային ծախսերը, որոնք դուրս են մնում մասնավոր գործարարության շահերի շրջանակից (առողջապահություն, մշակույթ, կրթություն և այլն): Զուգահեռաբար, հանրային ֆինանսական միջոցներն ուղղվում են նաև պետական ներդրումային ծրագրերին, որտեղ շահույթ չի հետապնդվում, սակայն լուծվում են հանրության կարիքների սպասարկման խնդիրներ:

Հատկապես, նման երևույթները դրսևորվում են լեռնահանքային արդյունաբերության ոլորտում, որտեղ գործարարության արդյունքում ստացվում են գերշահույթներ: Հետևաբար, այստեղ ձևավորվում են հարկային համեմատաբար խոշոր պարտավորություններ, որոնք բումերանգի էֆեկտի դեր են կատարում, այսինքն հետագայում վերաուղղվում են լեռնահանքային արդյունաբերության ոլորտ, ծախսվելով բնապահպանական վնասների կանխարգելման, բնական ռեսուրսների վերականգնման, հանքարդյունաբերության տեխնոլոգիական նոր լուծումների վրա:

Այս առումով, ոչ միայն գործնականում, այլև տեսաբանների շրջանում հիմնախնդիրներ են առաջանում ուղիներ որոնելու, գնահատելու համար լեռնահանքային արդյունաբերության հարկազանձման հատույցը, պարզելու, թե որքանով են արդարացվում ոլորտում ձևավորվող հարկային բեռը և դրանից բխող սոցիալ-տնտեսական զարգացումների տեմպերը: Բացի այդ, լեռնահանքային արդյունաբերության կազմակերպությունները, հանդիսանալով խոշոր հարկատուներ, շահախնդիր են ստանալու հաշվետվողականություն իրենց հարկային պարտավորությունների և դրանցից բխող սոցիալ-տնտեսական հատույցների համաչափության մասին, ինչպես նաև այս առումով ունենալու հետադարձ կապ հարկազանձմանը առնչվող բոլոր շահառուների միջև:

Ներկայումս կարևորվում է նաև հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը ոչ միայն ֆիսկալ նկատառումներով, այլև հարկման արդարության և հարկային մուտքերի հասցեագրված վերաբաշխման տեսանկյունից: Այս առումով, ոռյալթին հանքարդյունաբերությունում պետք է գանձվի ոչ միայն ֆիսկալ նպատակադրումներով, այլև գործարարության արդյունքերի սոցիալ-տնտեսական համահարթեցման կարգավորիչ դերակատարում պետք է ունենա: Բնապահպանական այս վճարի քաղաքականությունն իրականացնելիս կարևորություն պետք է տրվի ոչ միայն հանքաքարի ռեսուրսների անարդյունավետ արդյունահանման զսպող մեխանիզմներին, այլև հարկային կարգավորիչ լծակներով արդյունահանման գերշահույթների արդարացի վերաբաշխումներին:

Ներկայումս կարևորվում է նաև լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկազանձման արդյունավետության որոշումը, ինչը ներկայացնում է հարկաբյուջետային քաղաքականության հիմնավորվածության աստիճանը, քանի որ այն իր մեջ մի կողմից ամփոփում է պետության կողմից վարվող ֆիսկալ գործունեության արդյունքները, և մյուս կողմից ցույց է տալիս հավաքագրված հարկերի վերաբաշխման ոլորտներն ու օգտագործման թիրախային ուղղություններով օգտագործման փաստացի հատույցը:

Տնտեսավարման արդի փուլում ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկազանձման գործընթացում անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու այնպիսի հարկային քաղաքականություն, որով ներդաշնակություն կստեղծվի տարբեր հարկատեսակների գծով պարտավորությունների ձևավորման շրջանակում: Այս առումով, հարկազանձումը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հնարավորինս պետք է կառուցվի հարկերի հիմնական գործառույթների հայեցակարգի վրա, հաշվի առնելով ինչպես գանձապետական, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն մոտեցումները: Բացի այդ, լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկազանձումը նպաստելով հանրապետության տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը, միաժամանակ պետք է թիրախավորվի այն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, որտեղ առավել ակտիվ է ընթանում հանքագործական գործունեությունը:

Հարկ է նշել, որ լեռնահանքային արդյունաբերությունում վարվող հարկային քաղաքականության հայեցակարգային արդյունավետ մոտեցումների ներդրման և զարգացման հիմնախնդիրների քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես արտասահմանցի տեսաբանների (Ա. Ատկինսոն, Ի. Բոլոտով, Ե. Գրիգլովա, Ի. Կուչերով, Վ. Պետրունին, Պ. Հելլեր, Օ. Ջեյմս), այնպես էլ հայազգի հետազոտողների (Ա. Անաստասյան, Վ. Աղասյան, Ա. Խաչատրյան, Տ. Հարությունյան, Ա. Հովհանիսյան, Ռ. Մովսեսյան, Ն. Քարդումյան) աշխատություններում՝ համընդհանուր գնահատականներ տալով ֆիսկալ քաղաքականության բարելավմանը, հարկային վարչարարության համակարգի կատարելագործմանը, հարկային բեռի օպտիմալացմանը: Սակայն, հարկազանձման հատույցի, բնօգտագործման վճարների հաշվարկային բարելավումների, ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել նրանց հետազոտություններում, որն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունը և կատարված հետազոտության նպատակադրումները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է հանդիսացել ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն ոլորտում հարկազանձման արդյունավետության բարձրացմանը՝ հնարավորինս լիարժեք դարձնելով ինչպես հարկերի ֆիսկալ, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն գործառույթները:

Ելնելով հետազոտության նպատակից, առենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- մշակել ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում կիրառվող հարկային քաղաքականության մոտեցումներ, շեշտադրումներ կատարելով ոչ միայն ֆիսկալ գործունեության բարելավմանը, այլև ոլորտից հավաքագրվող հարկերի խթանիչ, վերահսկիչ և հասցեական վերաբաշխիչ գործառույթների ակտիվացմանը,
- առաջարկել հարկազանձման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ, հաշվի առնելով ոլորտում առկա հարկային բեռի հիմնավորումները, հարկերի հավաքագրման հատույցի գնահատումները, ինչպես նաև պետության կողմից լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը ցուցաբերվող ֆինանսական աջակցության աստիճանը,
- մշակել հարկային քաղաքականության հայեցակարգ, հիմքում դնելով հարկազանձման համակարգի ոչ միայն ֆիսկալ գործառույթների լիարժեքության, այլև լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկային համակարգում ընդգրկված տարբեր շահառուների սպասումների իրականացման աստիճանը,
- առաջարկել բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների վերաբաշխման աստիճանակարգային համակարգ, առավել հստակեցնելով հավաքագրված վճարների օգտագործման հասցեականությունը և էկոլոգիական վնասների վերականգմանն ուղղված ֆինանսավորման օբյեկտիվությունը,
- առաջարկել լեռնահանքային ոլորտի զարգացման շահառուների միջև հետադարձ տեղեկատվական կապի ապահովման մեխանիզմ, բարելավելով ոլորտի կազմակերպություններում կիրառվող ֆինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական համակարգերը:

**Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերությունը, իրեն հատուկ հարկազանձման գործառույթների ոլորտով:

Հետազոտության առարկան լեռնահանքային արդյունաբերությունում կիրառվող հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգային շրջանակն է:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել հանքարդյունաբերությունում վարվող հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Առենախոսությունում օգտագործվել են հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական արստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև հարկային հավաքագրումների և դրանց վերաբաշխումների գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

**Հեղազոտության գիտական նորույթը:** Հիմնվելով լեռնահանքային արդյունաբերության հարկազանձման համակարգի ուսումնասիրությունների վրա, ատենախոսությունում առաջարկվել են ոլորտում իրականացվող հարկային քաղաքականության բարելավման ուղիներ: Հետազոտության ընթացքում ձեռք են բերվել մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են.

- ոռյալթիի հաշվարկման դրույթաչափին հավելումներ կատարելիս առաջակվել է հիմք ընդունել ոչ թե ներկայումս կիրառվող հարկվող շահույթ/իրացման շրջանառություն հարաբերակցությունը, այլ հաշվապահական շահույթ/արդյունահանման ինքնարժեք հարաբերակցությունը, որով հանքարդյունաբերության արդիականացման գծով գործնական ակտիվություն կդրսևորվի հարկերի խթանիչ գործառույթներում,
- առաջարկվել է թափոնների գծով բնապահպանական ֆոնդերի աստիճանակարգային ձևավորման մոտեցում, որով հասցեագրելով բնապահպանական հարկերի վերաբաշխումը, թափոնների կառավարման լրացուցիչ գործառույթներ են դրվում լեռնահանքային կազմակերպությունների վրա և հարկազանձման շարժառիթներ ձևավորում թափոնների վերամշակման ակտիվացման ուղղությամբ,
- հաշվետվական տեղակտվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվել են մի շարք նոր կառավարչական հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնք հաշվեկշռում են լեռնահանքային կազմակերպության հարկազանձման արդյունքներն ու դրանցից բխող համայնքային սոցիալ- տնտեսական հետևանքները,
- մշակվել են լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգային նոր մոտեցումներ, հիմնված հարկերի հավաքագրման և վերաբաշխման հաշվետվողականության վրա, որով գնահատականներ են տրվում հարկազանձումից ձևավորված ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման և օգտագործման փաստացի արդյունքներին:

**Հեղազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:** Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում վարվող հարկաբյուջետային քաղաքականության զարգացման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ոլորտային հարկազանձման գործընթացի բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում վարվող հարկային քաղաքականությունում՝ նպաստելով հանքար-

ոյունաբերության կազմակերպությունների հարկազանձման գործառույթների բարելավմանը, հարկային բեռի գնահատմանը, հարկային պարտավորությունների հատույցի հաշվետվողականության համակարգի մեթոդաբանության բարելավմանը:

**Հետազոտության փորձարկումը և հրատարակումները:** Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, ՀՀ լեռնահանքային ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Երևանի հյուսիսային համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում, ՀՈՒՄԿ հիմնադրամի գիտաժողովում (Երևան 2017), Երևանի հյուսիսային համալսարանի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովում (Երևան 2018 թ.), Թբիլիսի գործարարության բարձրագույն դպրոցի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովում (Թբիլիսի 2019թ.): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 7 հրատարակումներում:


**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների և առաջարկությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն ընդգրկում է 34 գծապատկեր և 24 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա առանց հավելվածների: Գրականության ցանկը զբաղեցնում է 7 էջ, իսկ հավելվածները՝ 4 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Լեռնահանքային արդյունաբերությունում հարկային քաղաքականության իրականացման առանձնահատկությունները**» գլխում քննարկվում են հարկային արդյունավետ քաղաքականության տեսամեթոդաբանական մոտեցումները: Լեռնահանքային արդյունաբերությունը առանցքային դերակատարում ունի ՀՀ հարկային համակարգում, և ոչ միայն այն պատճառով, որ այն ապահովում է հարկային մուտքերի շուրջ 30%-ը, այլև ունի հարկման դիվերսիֆիկացված կառուցվածք: Հանրապետության ներկայիս առաջին 100 խոշոր հարկատուներից 4-ը լեռնահանքային արդյունաբերության ոլորտի կազմակերպություններն են:<sup>1</sup>

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանքարդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի կազմում զգալի է և հատում է 18%-ի շեմը, դրան հավելվում է նաև 2% թափոնների կառավարման գործունեության տեսակարար կշիռը (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ՀՀ-ում<sup>2</sup>

Մյուս կողմից, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղական հանքաքարի արդյունահանման և վերամշակման ծավալները վերջին տարիներին ՀՀ-ում աճել են: Բնականաբար, բաց հանքերի շահագործումը և մետաղի հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումը բազում բնապահպանական խնդիրներ են առաջացնում, քանի որ ավելանում են պոչանքների ծավալները, հանքաքարի քիմիական վերամշակումից հետո ջրավազանների լցոնումը, բաց հանքերի պարագայում կենսապաշարներին վնասի

<sup>1</sup> ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք, //www.taxservice.am

<sup>2</sup> ԱՎԾ պաշտոնական կայք, www.armstat.am



հասցնումը, օդի աղտոտումը, որոնք հանքարդյունաբերող կազմակերպություններում բնապահպանական վճարային պարտավորություններ են առաջացնում:

Այնուհանդերձ, վերջին տարիներին մետաղական հանքաքարի արդյունահանման աճին զուգընթաց Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական վճարների կառուցվածքում նվազում են թափոնակուտակումների դիմաց կատարվող հարկային պարտավորությունները: Հարկային վճարումների անհամաչափություններ են նկատվում նաև կազմակերպությունների կողմից բնօգտագործման վճարների կառուցվածքային փոփոխությունների միտումներում: Այսպես, վերջին տարիներին բնօգտագործման վճարների կառուցվածքում կենսապաշարների օգտագործման դիմաց կատարվող վճարները նվազել են այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում աճ արձանագրվող հանքարդյունաբերությունը հիմնականում չի իրականացվում փակ եղանակով և լուրջ վնասներ է պատճառում հանրապետությունում առկա կենսապաշարներին:

Հանքարդյունաբերության զարգացումը ուղեկցվում է արտադրական թափոններով, որոնք բնորոշվում են վտանգավորության տարբեր աստիճաններով և ըստ այդմ էլ հարկվում են բնապահպանական վճարներով: Եվ դա է պատճառը, որ ոլորտի կազմակերպությունները հնարավորինս փորձում են արտադրական թափոնները ներկայացնել բնապահպանությանը առնչվող իրենց ոչ վտանգավորության աստիճանով: Հետևաբար, հարկազանձման գործընթացում լուրջ ուշադրություն է դարձվում պոչամբարներում ըստ վտանգավորության աստիճանի կուտակված թափոնների վերլուծության վրա, որը երբեմն իրատեսական չի համարվում և ՀՀ հանքարդյունաբերական կազմակերպություններում իր թերազնահատումն է ստանում:

Այսպես, բազմաթիվ փորձագետներ պնդում են, որ հատկապես մետաղական հանքերի շահագործումը ՀՀ-ում մեծ վտանգ է ներկայացնում թե բնապահպանական տեսանկյունից, և թե առողջապահական առումով: Այդ վնասների մեծ մասն արդեն ենթակա չէ փոխհատուցման կամ դրա համար անհրաժեշտ են ֆինանսական հսկայական միջոցներ, որոնք շատ անգամ գերազանցում են հանքարդյունաբերության շահագործման օգուտներին: Ավելին, ՀՀ-ում այսօր շահագործվող հանքավայրերը արդեն շատ են և համաչափ չեն այդ տարածքի համար: Հարկ է նշել նաև, որ ՀՀ-ում ամենախոշոր բնապահպանական և բնօգտագործման վճարները կատարում են հանքարդյունաբերության կազմակերպությունները, ինչն էլ վկայում է դրանց կողմից հանրապետության բնությանը մեծագույն վնաս հասցնելու մասին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների ձևավորման քաղաքականության բարելավման ուղիները մետաղների հանքարդյունաբերությունում»** գլխում իրենց մեկնաբանություններն են ստանում բնական ռեսուրսների օգտագործման դիմաց հարկային մուտքերի և դրանց օգտագործման քաղաքականության հիմնախնդիրների լուծման ուղիները:

Հանքարդյունաբերության հարկային բեռը էականորեն տարբերվում է արդյունաբերական մյուս ոլորտներում պետական բյուջեի նկատմամբ ձևավորվող հարկային պարտավորությունների շրջանակից և բնույթից: Այստեղ, ավանդական ուղղակի և անուղղակի հարկերին գումարվում են նաև բնապահպանական և բնօգտագործման վճարները: Այստեղից էլ բխում են հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող հարկային քաղաքականության մի շարք առանձնահատկություններ՝ կապված հարկազանձման համակարգի շահառուների (գործարարներ, ներդրողներ, հանքավայրի շրջակա միջավայրի բնակիչներ, կազմակերպության աշխատողներ, պետություն) սպասումների և հանքարդյունաբերության բնապահպանական ու բնօգտագործման վճարային բեռի ներդաշնակեցման հետ:

Ներկայումս, միջազգային պրակտիկայում արդեն իսկ խնդիր է դրվում ֆիսկալ լծակներով կարգավորելու էկոարդարությունը, կանխելու բնական պաշարների թեպետ գերշահավետ, բայց անխնա օգտագործումը: Եվ այդ նպատակով սահմանվում են ողջամիտ բնապահպանական ու բնօգտագործման վճարներ, այնպես, որ հարկազանձման նմանատիպ ճանապարհով լուծվեն ոչ միայն ֆիսկալ քաղաքականության խնդիրներ, այլև արդարացվեն բնօգտագործման և բնապահպանական պարտավորությունների նպատակային մարման և արդարացի բաշխման հանրության սպասումները:

ՀՀ օրենսդրությունում կիրառվող հարկվող շահույթ/ռոյալթիի բազա (իրացման շրջանառություն) ցուցանիշը, որով հավելումներ են կատարվում ռոյալթիի դրույքաչափի վրա, անմիջականորեն չի առնչվում հանքարդյունաբերության կազմակերպությունների շահութաբերության հետ: Ռոյալթիի հաշվարկման համար ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն, սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$R = 4 + [\bar{C}/(\bar{C} \times 8)] \times 100, \text{ որտեղ՝}$$

R – ռոյալթիի դրույքաչափն է՝ տոկոսով.

$\bar{C}$  – շահույթն է նախքան հարկումը՝ դրամով, որը հաշվարկվում է որպես ռոյալթիի բազայի և շահութահարկի հաշվարկման գծով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի, և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

$\bar{C}$  – ռոյալթիի բազան է՝ դրամով:<sup>3</sup>

Ոլորտի կազմակերպությունների կողմից արտադրանքի իրացման շրջանառելիությունը մեծապես կախված է մետաղի համաշխարհային գներից հետ, որոնք անընդհատ փոփոխությունների են ենթարկվում և ուղղակիորեն կապ չունեն հանքարդյունաբերող կազմակերպությունների գործարար ակտիվության հետ: Այս առումով, առաջարկում ենք ռոյալթիի հաշվարկման հիմքում շահութաբերության ցուցանիշը ընդունել ոչ թե ըստ իրացման շրջանառելիության, այլ ըստ ինքնարժեքի շահութահատույցի:

<sup>3</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 2017, հոդվ. 209

Նման առաջարկը հիմնավորվում է առաջին հերթին հարկերի կարգավորիչ գործառույթով: Հանքարդյունահանող կազմակերպությունները առանձնապես չեն ձգտում բնապահպանական ուղղությամբ ներդրումների՝ և որոշակիորեն հանքաքարի էքստենսիվ արդյունահանման են դիմում, հիմնականում խուսափում են հանքավայրի երկարակետյալ ուղղությամբ ջանքեր գործադրելուց, քանի որ դրանք լրացուցիչ ֆինանսավորում են պահանջում և թանկացնում են հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը

Հանքարդյունաբերության թափոնների կառավարման համակարգում դեռևս չեն գործում հարկերի խթանիչ գործառույթները: ՀՀ-ում գործող հանքարդյունաբերական կազմակերպությունները բնավ չափանդիմ չեն թափոնների վերամշակման հարցում, քանի որ այն ի տարբերություն հանքաքարի արդյունահանման և վերամշակման՝ առավել նվազ շահութաբեր է: Այս առումով, առաջարկվում է թափոնների կառավարման համակարգում ստեղծել թափոնների վերամշակման և հարկային պարտավորությունների արտոնման փոխկապակցման շահադրդիչ լծակներ:

Աղյուսակ 1


ՀՀ-ում բնապահպանական և բնօգտագործման վճարները մեկ բնակչի հաշվով (դրամ)<sup>4</sup>

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Երևան	376.3	533.3	1 156.2	890.1	717.7	655.5	939.2
Արագածոտն	681.6	861.4	1 115.2	847.6	566.9	421.4	844.3
Արարատ	1 056.4	1 330.3	2 297.6	2 703.1	2 519.4	2 050.1	2 383.6
Արմավիր	245.7	365.0	495.3	514.1	429.6	360.1	520.5
Գեղարքունիկ	392.8	511.9	646.2	755.3	205.1	114.8	268.5
Լոռի	770.1	642.4	681.4 1	492.6	1 090.9	1 614.6	1 708.0
Կոտայք	535.3	578.8	669.4	765.0	730.7	583.8	833.4
Շիրակ	267.4	254.2	208.2	231.5	233.8	239.2	207.2
Սյունիք	645.0	648.2	665.0	728.7	588.1	768.3	747.9
Վայոց ձոր	2 881.0	2 718.5	3 115.2	3 269.7	3 478.5	534.3	4 028.1
Տավուշ	674.0	693.2	563.2	626.4	638.9	896.3	541.6

Կարևորում է նաև հանքարդյունաբերության թափոնների կառավարման համակարգում հարկերի կարգավորիչ գործառույթների ակտիվացումը: Մեր հանրապետությունում, թափոնների դիմաց վճարումները հավաքագրվելով պետության կողմից, մարզերի միջև բաշխվում են «կաթսայական» եղանակով, առանց հաշվի առնելու այդ վճարների հասցեագրման արդարությունը ըստ հանքարդյունաբերության թափոնակուտակման տեղանքների: Բացի այդ, անհամաչափություն է նկատվում նաև մարզերում մեկ բնակչի հաշվով բնապահպանական և բնօգտագործման վճարների ձևավորման

<sup>4</sup> Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, ԱՊԾ տեղեկագիր, 2019, էջ 131

ուրրտում (տես աղյուսակ 1), որը նույնպես թափոնների կառավարման համակարգում առաջացնում է հարկերի կարգավորիչ գործառույթների ակտիվացման խնդիր: Ուստի, առաջարկվում է թափոնների գծով բնապահպանական ֆոնդերի աստիճանակարգային ձևավորման մոտեցում (տես գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Թափոնների գծով բնապահպանական ֆոնդերի աստիճանակարգային ձևավորման մոտեցումը:<sup>5</sup>


Ատենախոսության երրորդ՝ «Հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնախնդիրները ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում» գլխում ներկայացվում են հարկային հոսքերի և դրանց առնչվող շահառուների սպասումների տեղակատվական հաշվետվողականության համակարգման հիմնախնդիրների լուծումներ:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում վարվող հարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս ներկայումս որոշակի տեղեկատվական խնդիրներ են առաջանում: Եվ այդ խնդիրները հիմնականում ծագում են հարկազանձման «տեղեկատվական հետադարձ կապի» ապահովման շրջանակում: Այս առումով, ներկայացվող հաշվետվական տեղեկատվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվում են մի շարք նոր կառավարչական հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնք կհաշվեկշռեն լեռնահանքային կազմակերպության հարկազանձման արդյունքներն և դրանցից բխող համայնքային սոցիալ- տնտեսական հետևանքները: Ընդ որում, նման հաշվառում կազմակերպելու պարտավորվածությունը նպատակահարմար ենք համարում

<sup>5</sup> Կազմվել է ատենախոսի կողմից:

դնելու հենց հանքարդյունաբերող կազմակերպությունների վրա, որոնք էլ տեղեկատվական հետադարձ կապ կապահովվեն հարկազանձման բոլոր շահառուների միջև:

Առաջարկում է կիրառել «Հարկազանձման հատույց» համադրող հաշիվը, որն իր դեբետային մասում արձանագրում է լեռնահանքային կազմակերպության գործունեության հետևանքով բնապահպանական վնասների փոխհատուցման ծախսերը, իսկ կրեդիտային մասով՝ կազմակերպությունից գանձվող բյուջետային մուտքերը (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հարկազանձման արդյունքների կառավարչական հաշվառման առաջարկվող մեխանիզմը և հաշիվների փոխկապվածությունը<sup>6</sup>


Հանքարդյունաբերության հարկազանձման ոլորտում հետադարձ կապը հարկերի հավաքագրման և վերաբաշխման ոլորտում կարևորվում է այնքանով, որքանով որ հարկային քաղաքականությանը մասնակից շահառուները սոցիալ-տնտեսական տարբեր շարժառիթներ ունեն, ուստի և հասցեական տեղեկատվություն են ակնկալում հարկերի հավաքագրման և օգտագործման գործառույթներից: Նման տեղեկատվությունը կարևորվում է նաև հարկերի կարգավորիչ, խթանիչ, վերահսկողական վերաբաշխիչ գործառույթների արդյունավետությունը գնահատելիս:

Այսպես, հասարակական կազմակերպությունները, երբեմն նաև պետական վերահսկիչ մարմինները, հաճախ տեղեկացված չեն լինում բնապահպանական ու բնօգտագործման վճարումների հավաքագրումների չափերից, որոնք պետք է կոնկրետ ուղղվեին հանքարդյունաբերության էկոլոգիական վնասների փոխհատուցմանը, որի հիմնական պատճառը հարկազանձող մարմինների և բնապահպանական կազմակերպությունների միջև տեղեկատվական հետադարձ կապի բացակայությունն է: Նույն պատճառաբանությամբ լեռնահանքային կազմակերպությունները լիարժեք տեղեկատվություն չեն ստանում, թե որքանով են իրենց կողմից պետական բյուջե կատարվող վճարները ծառայում նպատակին, օգտագործվում իրենց համայնքում բնապահպանական միջոցառումների վրա, որի հիմնական պատճառը հարկազանձման տեղեկատվական հետադարձ կապի բացակայությունն է:

<sup>6</sup> Գազնվել է ատենախոսի կողմից:

Ընդ որում, հարկազանձման արդյունքները հետաքրքրում են լեռնահանքային արդյունաբերության ոլորտի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահառուներին: Վճարելով բարձր հարկեր, հանքարդյունաբերական կազմակերպությունները փորձում են պարզել դրանց օգտագործման հասցեականությունն ու արդյունավետությունը, որպեսզի հանրությանը հաշվետու լինեն իրենց կողմից ձևավորած էկոլոգիական վնասի փոխհատուցման աշխատանքների գծով: Մյուս կողմից, հանրային պահանջմունք է առաջանում պարզելու, թե որքանով են հանքարդյունաբերության ոլորտից հավաքագրված հարկերը ծառայել իրենց նպատակին, և չկան արդյոք այդ ոլորտում ֆինանսական միջոցների փոշիացումներ: Բնականաբար, նման հարցադրումները ստանում են իրենց պատասխանները, եթե գործում է հարկազանձման տեղեկատվական հետադարձ կապ հարկային քաղաքականության մասնակից բոլոր շահառուների միջև:

Հարկազանձման տեղեկատվական հետադարձ կապի ձևավորումը հանքարդյունաբերության շահառուների շրջանում առաջնահերթորեն պետք է հիմնվի ոլորտի տեղեկատվական հոսքերի համակարգման վրա: Այս առումով, առաջարկվում է յուրաքանչյուր լեռնահանքային կազմակերպություն դիտարկել որպես հարկազանձման և հարկերի հասցեական վերաբաշխումն արտացոլող տեղեկատվական համակարգման առանձնացված կենտրոն, որտեղ կամփոփվեն ոչ միայն հարկային վճարումները, այլև հարկերի օգտագործման ուղղություններից ստացվող արդյունքները, շահառուների սպասումներից շեղումները (տես գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Շահառուների փոխակապվածության տեղեկատվական հոսքերի համակարգման մոտեցումները հանքարդյունաբերող ոլորտում<sup>7</sup>

<sup>7</sup> Գազմվել է ատենախոսի կողմից:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում վարվող արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգը առաջարկվում է դիտարկել հարկազանձման արդյունավետության, հարկատուների և ազգաբանակցության սոցիալ-տնտեսական սպասումների տեղեկատվական հետադարձ կապի ապահովվածության տեսանկյունից: Ընդ որում, առաջարկվող հայեցակարգում առանցքային է համարվում ինչպես լեռնահանքային կազմակերպությունների հարկային իրատեսական բեռի սահմանումները, այնպես էլ վճարային հատույցի գնահատումները:

Այս առումով, խնդիր է առաջանում սահմանելու լեռնահանքային կազմակերպությունների գծով հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ, որով հնարավորություն կստեղծվի գնահատելու նաև հարկազանձման արդյունավետությունը: Առաջարկվում է հարկատու լեռնահանքային կազմակերպությունների գծով որպես հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ առաջարկել պետբյուջե մուծումների ընդհանուր գումար/իրացումից եկամուտ հարաբերակցությունը:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության կարևորագույն արդյունքները և կատարվել են առաջարկություններ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. Հարկային քաղաքականության ձևավորումը լեռնահանքային արդյունաբերությունում առանձնահատուկություններ ունի ոչ միայն հարկատեսակների առավել լայն շրջանակի, այլև հարկազանձման արդարության և նպատակայնության տեսանկյունից: Հատկապես, նշված ոլորտի զարգացումը հակազդում է ազգային շահերին այն դեպքում, երբ երկիրը հանդես է գալիս ընդամենը որպես հումքային կցորդ և մետաղական հանքաքարի մշակումը չի իրականացնում ավարտական ցիկլով՝ թողարկելով մետաղական վերջնական արտադրանք: Մյուս կողմից, հարստացված հանքաքարի արտադրական ոլորտը ապահովում է գերշահույթներ, ձևավորում է ոչ միայն գործարարությանը բնորոշ ավանդական հարկեր, այլև լրացուցիչ հարկային պարտավորություններ է ստանձնում պետության հանդեպ, ինչպիսիք են ռոյալթին, բնօգտագործման և բնապահպանական հարկերը: Բացի այդ, ոլորտին հատուկ է նաև հարկերի ֆիսկալ գործառույթի ակտիվությունը: Հետևաբար, լեռնահանքային արդյունաբերության ոլորտում պետությունը պետք հնարավորինս ձգտի վարել հավասարակշռված ֆիսկալ քաղաքականություն, որպեսզի այն անհիմն չհակադրվի գործարարության շահերին և ավելորդ լարվածություն չառաջացնի հարկազանձման բնագավառում:

2. ՀՀ հանքարդյունաբերող կազմակերպություններում ռոյալթիի գնահատման և հաշվարկման ոլորտում ներկայացվել են մի շարք առաջարկություններ: Մասնավորապես, ռոյալթին հանքարդյունաբերությունում չպետք է գանձվի ոչ միայն ֆիսկալ նպատակադրումներով, այլև գործարարության արդյունքների սոցիալ-տնտեսական համահարթեցման կարգավորիչ դերակատարում պետք է ունենա: Այս առումով, բնապահպանական վճարի քաղաքականությունն իրականացնելիս կարևորություն պետք է տրվի ոչ միայն

հանքաքարի ռեսուրսների անարդյունավետ արդյունահանման զսպող մեխանիզմներին, այլև հարկային կարգավորիչ լծակներով արդյունահանման գերշահույթների արդարացի վերաբաշխումներին: Բացի այդ, ռոյալթիի հաշվարկման դրույքաչափին հավելումներ կատարելիս պետք է հիմք ընդունել ոչ թե հարկվող շահույթ/իրացման շրջանառություն հարաբերակցությունը, որն այսօր օրենսդրական պահանջ է, այլ հաշվապահական շահույթ/արդյունահանման ինքնարժեք հարաբերակցությունը, որով հանքարդյունաբերության արդիականացման առումով գործնական ակտիվություն կդրսևորվի հարկերի խթանիչ գործառույթներում:

3. Հարկային քաղաքականությունը հանքարդյունաբերության թափոնների կառավարման համակարգում դեռևս առավել ակտիվ է դրսևորվում իր ֆիսկալ գործառույթներով, որոնք բարելավման կարիք են զգում մի շարք ուղղություններով: ՀՀ-ում դեռևս լուրջ ռեզերվներ կան թափոնների գծով հարկազանձման բնագավառում, քանի որ դրանք լիարժեքորեն չեն ներկայացվում ըստ իրենց վտանգավորության աստիճանի: Բացի այդ, միայն ֆիսկալ գործառույթներով հնարավոր չէ լուծել հանքարդյունաբերության թափոնների ձևավորման հարկազանձման հիմնախնդիրները, եթե դրան զուգահեռ չեն ակտիվանում բնապահպանական հարկերի խթանիչ, կարգավորիչ և վերահսկիչ գործառույթները: Դրան կարող է նպաստել թափոնների գծով ՀՀ-ում բնապահպանական ֆոնդերի աստիճանակարգային ձևավորման համակարգի ներդրումը: Հետևաբար, առաջարկվում է հանրապետությունում սահմանել էկոլոգիական վճարների աստիճանակարգ, որպեսզի հանքարդյունաբերության կազմակերպությունների համար ակնառու դառնա բնապահպանական մուծումների օգտակարությունը և հատույցը՝ իրենց իսկ կողմից կազմակերպված բիզնեսում:

4. ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում վարվող հարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս ներկայումս որոշակի տեղեկատվական խնդիրներ են առաջանում: Եվ այդ խնդիրները հիմնականում ծագում են հարկազանձման «տեղեկատվական հետադարձ կապի» ապահովման շրջանակում: Հանքարդյունաբերության հարկազանձման ոլորտում հետադարձ կապը հարկերի հավաքագրման և վերաբաշխման ոլորտում կարևորվում է այնքանով, որքանով որ հարկային քաղաքականությանը մասնակից շահառուները սոցիալ-տնտեսական տարբեր շարժառիթներ ունեն, ուստի և հասցեական տեղեկատվություն են ակնկալում հարկերի հավաքագրման և օգտագործման գործառույթներից:

Հաշվետվական տեղակատվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվում են մի շարք նոր կառավարչական հաշիվներ, և հաշվային թղթակցություններ, որոնք հաշվեկշռում են լեռնահանքային կազմակերպության հարկազանձման արդյունքներն և դրանցից բխող համայնքային սոցիալ-տնտեսական հետևանքները: Հարկազանձման ընթացքի և դրանցից բխող արդյունքների տեղեկատվական հոսքերի համակարգման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ստեղծում հանքարդյունահանող կազմակերպության կողմից հանրային հաշվետվողականության կազմակերպման համար՝



համայնքին ներկայացնելով հարկազանձման ռեսուրսների միջոցով գործարարության արդյունքում պատճառած էկոլոգիական վնասների փոխհատուցումները:

5. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում եթե գործում է հստակ և կարգավորված ֆիսկալ քաղաքականության համակարգ, ապա դրան զուգահեռ, դեռևս բացակայում է ոլորտում կիրառվող հարկաբյուջետային մշակված հայեցակարգ: Այս առումով, առաջարկվել են լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային հայեցակարգային նոր մոտեցումներ՝ առանցքային երկու հիմնասյուներով:

Դրանցից առաջինը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկազանձման արդյունավետությունն է, որն իր մեջ մի կողմից ամփոփում է պետության կողմից վարվող ֆիսկալ գործունեության արդյունքները, և մյուս կողմից, ցույց է տալիս հավաքագրված հարկերի վերաբաշխման ոլորտներն ու օգտագործման թիրախային ուղղություններով օգտագործման փաստացի հատույցը: Իսկ երկրորդը, հանքարդյունաբերության ոլորտի շահառուների շրջանում տեղեկատվական հետադարձ կապի ապահովումն է, որով չափելի ցուցիչներով գնահատելով լեռնահանքային ոլորտի հարկազանձման հատույցը, ոչ միայն տրվում են վարվող հարկաբյուջետային քաղաքականության գնահատականներ, այլև կատարվում են նման գնահատականների համեմատական վերլուծություններ՝ գործարարության շահառուների և համայնքային ազգաբանակչության սոցիալ-տնտեսական սպասումների տեսանկյունից:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝**

1. Սվետլանա Մուրադյան, Հարկային քաղաքականության բարելավման առանցքային խնդիրները լեռնահանքային արդյունաբերությունում, //«Ֆինանսներ և էկոնոմիկա», # 3-4 (211-212) 2018, էջ 77-83:
2. Սվետլանա Մուրադյան, Հարկային արդյունավետ քաղաքականության տեսամեթոդաբանական մոտեցումները, //«Այլընտրանք» գիտական հանդես, #2, ապրիլ-հունիս, 2018, էջ 382-388:
3. Սվետլանա Մուրադյան , Royalty evaluation and calculation improvement ways in mining, «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական հանդես, 2, 2018, էջ 156-165:
4. Նոննա Խաչատրյան, Սվետլանա Մուրադյան, Տեղեկատվական հոսքերի համակարգման հիմնախնդիրները հանքարդյունաբերության հարկազանձման ոլորտում, //«Ակունք» գիտական հանդես, 3/ 2019 , էջ 122-129:
5. Svetlana Muradyan, Taxation Issues in Mining Sector RA, //International Scientific conference “Digital era and moder business challenges”, Tbilisi, 2019, pp. 17-25:

6. Սվետլանա Մուրադյան, Հետաձգված հարկային ակտիվների գնահատման պատմական ընթացքը լեռնահանքային կազմակերպություններում, //«Պատմություն և քաղաքականություն», 3(4), 2019, էջ 123-130
7. Svetlana Muradyan, Daina Znotina, Theoretical aspects of fiscal policy in the mining sector, //Journal of social sciences “Latgale National Economy Research”, No 1(11), November 2019, pp. 117-124

## ПУТИ УЛУЧШЕНИЯ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 10 декабря 2020 г., в 14<sup>00</sup> часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

### РЕЗЮМЕ

**Цель и задачи исследования.** Цель исследования состояла в том, чтобы представить пути совершенствования налоговой политики в горнодобывающей промышленности Республики Армения, которые будут способствовать повышению эффективности налогообложения в данной области.

Исходя из цели исследования, в диссертации были исследованы следующие вопросы:

- разработать подходы налоговой политики, применяемых к горнодобывающей промышленности Республики Армения, с акцентом не только на улучшение налогово-бюджетной деятельности, но и на продвижение налоговых стимулов;
- предложить показатели, характеризующие эффективность налогообложения, принимая во внимание не только обоснование налогового бремени в секторе, оценки уровня сбора налогов, но и уровень финансовой поддержки, оказываемой государством, на развитие горнодобывающей промышленности;
- разработать концепцию налогооблагаемой политики, основанную на степени выполнения не только фискальных функций налоговой системы, но и степени ожиданий различных заинтересованных сторон, вовлеченных в горнодобывающий сектор;
- предложить систему перераспределения природопользовательских и экологических налогов, оптимизируя использование начисленных налогов и объективность финансирования для восстановления ущерба окружающей среде;

➤ предложить механизм обратной связи отчетности для заинтересованных сторон, путем совершенствования информационных систем финансового и управленческого учета, используемых в горнодобывающих организациях.

**Научная новизна исследований.** Результатом исследования стала разработка путей совершенствования налоговой политики в горнодобывающей промышленности Республики Армения. В частности:

- при внесении дополнений в расчетах роялти предлагается учитывать не соотношение налогооблагаемой прибыли / оборот выручки, которое используется в настоящее время, а соотношение бухгалтерской прибыли / себестоимость добычи, которое будет демонстрировать деловую активность в модернизации добычи в функциях налогового стимулирования;

- . был предложен поэтапный подход к формированию экологических фондов по отходам, который касается к перераспределению экологических налогов, возлагает дополнительные функции по управлению отходами на горнодобывающие компании и создает мотивации для активизации переработки отходов;

- был предложен ряд новых управленческих счетов и бухгалтерских корреспонденций, с целью координации потоков отчетности, которые уравнивают информационные потоки налогообложения горнодобывающей организации и вытекающие из этого социально-экономические последствия;

- разработаны новые концептуальные подходы к составлению фискальной политики в горнодобывающей промышленности на основе отчетности налогообложения и перераспределения налогов, которые оценивают фактические результаты перераспределения финансовых ресурсов и предотвращения ущерба окружающей среде.

Muradyan Svetlana Armenovna

## THE WAYS TO IMPROVE TAX POLICY IN THE MINING INDUSTRY OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on 10<sup>th</sup> of December 2020, at 14<sup>00</sup>, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

### ABSTRACT

*The purpose and objectives of the study.* The purpose of the study was to present ways of improving tax policy in the mining industry of the Republic of Armenia, which will contribute to increasing the efficiency of taxation in this sector.

Based on the purpose of the study, the following issues were examined in the dissertation:

- development of tax policy approaches applied to the mining industry of the Republic of Armenia, with an emphasis not only on improving fiscal activities, but also on promoting tax incentives;
- proposed indicators, characterizing the effectiveness of taxation, taking into account not only the justification of the tax burden in the sector, estimates of the level of tax collection, but also the level of financial support provided by the government to the development of the mining industry;
- developed a concept of taxable policy, based on the degree of fulfillment not only of the fiscal functions of the tax system, but also the degree of expectations of various stakeholders, involved in the mining sector;
- proposed a system of redistribution of environmental tax and natural use fee, optimizing the use of accrued taxes and the objectivity of financing to restore environmental damage;
- proposed a reporting feedback mechanism for interested parties involved in the development of deposits by improving the information systems of financial and managerial accounting used in industry organizations.

*Scientific novelty of research.* The result of the study was the development of ways to improve tax policy in the mining industry of the Republic of Armenia. In particular:

- in making additions to the calculation of royalties, it is proposed to take into account not the taxable profit / revenue ratio that is currently being used, but the accounting profit / production cost ratio, which will demonstrate business activity in the tax incentive functions of production modernization;

- . a phased approach to the formation of environmental funds for waste was proposed, which relates to the redistribution of environmental taxes, assigns additional functions of waste management in mining companies and creates motivation to activate recycling process;

- proposed a number of new management accounts and correspondence, aiming to coordinate reporting flows, that are balancing the information flows of taxation of the mining organization and the resulting socio-economic consequences;

- new conceptual approaches suggested to the preparation of the fiscal policy in the mining industry, based on the reporting of tax collecting and redistribution, which is aimed to give evaluation to the actual results of financial resources' redistribution and ecological damage prevention, formed from tax collection.

A handwritten signature in red ink, appearing to be 'A. Khachatryan', is centered on the page. The signature is fluid and cursive, with a large initial 'A' and a long, sweeping tail.